Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

Հայտարարվում է մրցույթ՝ Երևանի Հրանտ Դինքի անվան թիվ 44 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի (21 դասաժամ) ռուսաց լեզվի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1) մեկ լուսանկար 3x4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի հունվարի 19-ից փետրվարի 2-ը ներառյալ, ամեն օր՝ 10:00-15:00-ն, բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 4-ին՝ ժամը 12:00-ին, Երևանի Հրանտ Դինքի անվան թիվ 44 հիմնական դպրոցում, հասցեն ք.Երևան, Մինաս Ավետիսյան 89:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 24 19 41 հեռախոսահամարով: